ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ԲԱՔՎԻ ԿՈՄՈՒՆԱՅԻ ՂԵԿԱՎԱՐ

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

1978 թ. հոկտեմբերի 13-ին լրանում է Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտ ու զինակից, Սովետական Միության կոմունիստական կուսակցության և սովետական պետության ականավոր գործիչ Ստեփան Գևորգի Շահումյանի ծննդյան 100-ամյակը։

Ս. Շահումյանը լենինյան հին գվարդիայի փայլուն դեմքերից է։ Երկար տարիներ նա աշխատել է Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավարությամբ, նամակագրություն է ունեցել նրա հետ մարքսիստական տեսության և կուսակցական ու պետական շինարարության մի շարք կարևորագույն հարցերի շուրջը։ Գ. Կ. Օրջոնիկիձեի դիպուկ արտահայտությամբ Շահումյանը տեսական մարքսիզմի ծանր հրետանին էր[1]։ Շահումյանը խոշոր դեր է կատարել մասնավորապես Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ստեղծման ու ամրապնդման, կովկասյան պրոլետարիատի ինտերնացիոնալ դաստիարակության գործում։ Նա 1918 թ. Բաքվի հերոսական կոմունայի առաջնորդն էր և այդ պատում էլ հերոսաբար զոհվեց։ Կուսակցությունը, անձամբ Վ. Ի. Լենինը բարձր են գնահատել Ստ. Շահումյանի հմուտ աշխատանքը որպես կուսակցական ու պետական ականավոր գործչի։ «Ես լիովին վստահում եմ Շահումյանին»[2],— ասել է Լենինը 1918 թ. օգոստոսին։

Շահումյանի ակտիվ աշխատանքը կուսակցության արտասահմանյան կազմակերպություններում 1902—1905 թթ., ելույթները ՌՍԴԲԿ IV (Ստոկհոլմի) և V (Լոնդոնի) համագումարներում, անձնական հանդիպումները և նամակագրությունը Վ. Ի. Լենինի հետ, աչքի ընկնող դերը Մեծ Հոկտեմբերի գրոհներում, 1918 թ. Բաքվի հերոսական կոմունայի հմուտ ղեկավարությունը, մարքսիզմ-լենինիզմի, պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարներին հետևողական նվիրվածությունը նրան դարձրին համառուսաստանյան և միջազգային բանվորական ու կոմունիստական շարժման հանրաճանաչ գործիչ։

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն հոդվածում հեղինակի նպատակն է համառոտակի լուսաբանել Ստեփան Շահումյանի հեղափոխական գործունեությունը Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո մինչև 1918 թ. սեպտեմբերը, երբ բոցաշունչ ինտերնացիոնալիստն իր մարտական ընկերների հետ միասին գաղանաբար գնդակահարվեց անդրկասպյան

---

1 Տե՛ս Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 98։
2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 380։

ավազուտներում՝ օտարերկրյա իմպերիալիստների և նրանց վարձկանների կողմից։

* * *

Բաքվի կոմունան Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ծնունդն էր, նրա հաղթանակի հետևանքը։ Բոլշևիկների ղեկավարությամբ դասակարգային պայքարի երկարամյա ու հարուստ ուղի անցած Բաքվի պրոլետարիատը Կովկասում առաջինը բարձրացրեց և հաղթականորեն առաջ տարավ Մեծ Հոկտեմբերի դրոշը։ Այդ հերոսական պայքարի ականավոր ղեկավարներից էր Ստեփան Շահումյանը, որը փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո վերադառնալով Սարատովի աքսորավայրից, ճանապարհին իմանում է, որ հեռակա կարգով ընտրվել է բանվորների դեպուտատների Բաքվի Սովետի նախագահ։ 1917 թ. օգոստոսին՝ ՌՍԴԲ(բ)Կ VI համագումարում Շահումյանն ընտրվում է կուսակցության Կենտրոնական կոմիտեի անդամ։ Հոկտեմբերյան հեղափոխության նախօրեին նա ղեկավարում է Կովկասի բոլշևիկների առաջին համագումարը, որը Ռուսաստանի կենտրոնների հետ միասին զինված ապստամբության միջոցով երկրամասում սովետական իշխանության հաստատման կուրս է վերցնում։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի և Լենինի գլխավորած սովետական կառավարության առաջին պատմական դեկրետների ու որոշումների մասին Շահումյանն իմացավ Բաքվում և անմիջապես լծվեց դրանց կիրառման գործին։

Հոկտեմբերի 31-ին Բաքվի բանվորների և զինվորների դեպուտատների ընդլայնված Սովետի՝ հանքագործարանային, գնդային, վաշտային և նավատորմային կոմիտեների ներկայացուցիչների մասնակցությամբ գումարված կոնֆերանսը ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունում է Շահումյանի առաջարկած բանաձևը ի պաշտպանություն համառուսաստանյան սովետական կառավարության և Բաքվի շրջանում ամբողջ իշխանությունը իր ձեռքը վերցնելու մասին։

Նոյեմբերի 2-ին Բաքվի շրջանի բանվորների և զինվորների ընդլայնված Սովետը Շահումյանին ընտրում է իր գործադիր կոմիտեի նախագահ։ Գործկոմի առաջին իսկ կոչը, որը ստորագրել էր Շահումյանը, ողջունում էր Պետրոգրադի հեղափոխական պրոլետարիատին ու կայազորին, Լենինի գլխավորած նոր հեղափոխական կառավարությունը, Սովետների իշխանությունը և հայտարարում, որ հենվելով Բաքվի պրոլետարիատի ու կայազորի հաստատ կամքի ու գիտակցական օգնության վրա, պաշտպան է կանգնելու չքավոր բնակչության շահերին և լիակատար հեղափոխական կարգ է պահպանելու քաղաքում։

Վերաբերմունքը դեպի Սովետական Ռուսաստանը, Լենինի կառավարությունը Անդրկովկասի բոլշևիկների քաղաքականության անկյունաքարն էր։ Սովետական Ռուսաստանի հետ անխախտ դաշինքը Շահումյանը համարում էր երկրամասի բոլոր ժողովուրդների ապատության հիմնական գրավականը և հակառակ սովետական իշխանությանը պատերազմ հայտարարելու նացիոնալիստական կուսակցությունների կործանարար գծի, հետևողականորեն անցկացնում էր Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը Անդրկովկա-

3 Տե՛ս Ս. Շահումյան, Երկեր, հատ. 3, Երևան, 1958, էջ 17—19։

սում ևս ապահովելու քաղաքականությունը, որը վրացի, ադրբեջանցի, հայ աշխատավորության փրկության միակ ելքն էր։ «Մենք, բաքվեցիներս,— գրում էր Շահումյանը,— ոչ մի լավ բան չունենք սպասելու կովկասյան նոր կառավարությունից։ Այդ կառավարությունը, նախկին «Օզակոմ»-ի նման, Անդրկովկասը կբաժանի երեք ազգային սատրապության՝ Վրաստանը կվերցնեն մենշևիկները, հայերին կդնեն «դաշնակցության» կուսակցության տրամադրության տակ, մուսուլմաններին կտրամադրեն մուսուլման նացիոնալիստներին»։

Անդրկովկասի ժողովուրդների դեմ ուղղված բուրժուանացիոնալիստական կուսակցությունների այս դավերին Շահումյանը հակադրում է հեղափոխական մասսաների անհողդողդ կամքը՝ միշտ լինել Սովետական Ռուսաստանի հետ և հենվելով դրա վրա, իր մարտական զինակիցների՝ Ա. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի, Ի. Ֆիոլետովի, Ն. Նարիմանովի, Գ. Կորգանովի և այլ հավատարիմ լենինյանների հետ միասին ղեկավարում է պրոլետարական Բաքուն Կովկասում սովետական իշխանության միջնաբերդը դարձնելու, Սովետական Ռուսաստանի հարավային սահմանագծում միջազգային իմպերիալիզմի և նրա նացիոնալիստական ռատրապների դեմ հեղափոխության հուսալի պատվար ստեղծելու համար։ «Հեղափոխությունը կշարունակվի Կովկասում,— հայտարարում է Շահումյանը,— Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատի հետ համաքայլ ընթացող բանվորներն ու զինվորները պայքարելու են հեղափոխությունը շարունակելու համար, ժողովրդական կոմիսարների իշխանությունը Լենինի գլխավորությամբ ճանաչելու համար, տեղերում բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների Սովետների իշխանության համար»[4]։ Դա սոցիալիստական հայրենիքի հանդեպ Բաքվի պրոլետարիատի ինտերնացիոնալ պարտքի կատարման կոչ էր։ Բոլշևիկները գիտակցում էին, որ այն կհանդիպի ոչ միայն անդրկովկասյան նացիոնալիստների ու սպիտակգվարդիական հակահեղափոխության, այլև միջազգային իմպերիալիստների կատաղի հարձակումներին։

Նացիոնալիզմը Շահումյանը համարում էր Կովկասում հեղափոխության ամենաոխերիմ թշնամին և անողոքաբար մերկացնում էր այն։ Նա ցույց էր տալիս, որ Անդրկովկասի երեք խոշորագույն բուրժուական կուսակցությունների՝ վրացական մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների նացիոնալիստական կուրսը բազմիցս մեծ շարիքներ է բերել տեղական ազգություններին, իսկ 1917 թ. հասցնում է Կովկասյան ռազմաճակատից ռուս զինվորների հեռանալուն, որի հետևանքով չափազանց ծանր դրություն է ստեղծվում Արևմտյան Հայաստանում։ «Մենք արդեն գիտենք այս անիծյալ պատերազմի ժամանակ հայերի կրած հարյուր հազարավոր զոհերի մասին,— գրում է Շահումյանը։— Իմանալով իրերի դրությունն այդ դժբախտ երկրում, մենք պետք է հավատացած լինենք, որ այնտեղ մի նոր դժոխք է ստեղծվում, անմեղ խաղաղ բնակչության արյան նոր դետեր են հոսելու։ Մեր հեղափոխական բանակը չի կարող անտարբեր մնալ դեպի այդ բնակչության բախտը»[5]։

Դեկտեմբերի 10 (23)-ին մասնակցելով Կովկասյան բանակի երկրային

4 Նույն տեղում, էջ 22—23։
5 Նույն տեղում, էջ 23։
6 Նույն տեղում, էջ 38։

II համագումարի աշխատանքներին, Շահումյանը ղեկավարում էր նրա բոլշևիկյան ֆրակցիայի գործունեությունը։

Շնորհիվ Շահումյանի, Գ. Կորգանովի և մյուս բոլշևիկների եռանդուն ջանքերի, Կովկասյան բանակի II համագումարը հրաժարվում է ճանաչել Անդրկովկասյան կոմիտեի իշխանությունը, ողջույնի հեռագիր է ուղարկում Լենինի գլխավորած Ժողկոմսովետին և ընտրում Երկրային նոր Սովետ՝ Շահումյանի գինակից Գ. Կորգանովի գլխավորությամբ։ Բոլշևիկները հաղթանակ տարան նաև երկրամասի բանվորների դեպուտատների Սովետների համագումարում, որը նույնպես տեղի ունեցավ Թիֆլիսում, դեկտեմբերին։ «Մենք չերմորեն ողջունում ենք թե՛ բանակային համագումարի և թե՛ Կովկասի պրոլետարական Սովետների համագումարի որոշումները,— գրում էր Շահումյանը,— դրանք վճռականապես խզեցին կապը պաշտպանողականության և համաձայնողականության հետ և ճանաչեցին ժողովրդական Կոմիսարների Սովետի հեղափոխական իշխանությունը»[7]։

Վ. Ի. Լենինը և կուսակցության Կենտրոնական կոմիտեն, չնայած Սովետական Ռուսաստանի ծանր դրությանը, ամենայն ուշադրությամբ հետևում էին Կովկասում ծավալվող իրադարձություններին, օգնություն էին կազմակերպում այստեղ սովետական իշխանության հաղթանակի համար մղվող պայքարը հաջողությամբ ծավալելու համար։

1917 թ. դեկտեմբերի 16-ին ՌՍՖՍՀ Ժողկոմխորհի նիստում Վ. Ի. Լենինի նախագահությամբ քննարկվում է Կովկասում ստեղծված դրության հարցը և որոշվում ՌՍԴԲ(բ)Կ Կենտկոմի անդամ, Բաքվի Սովետի նախագահ Ս. Գ. Շահումյանին նշանակել Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար՝ մինչև Կովկասում երկրային սովետական իշխանության կազմակերպումը։ Այդ մասին Լենինի ստորագրությամբ մանդատ է տրվում Շահումյանին, նրա տրամադրության տակ է դրվում 500 հազար ռուբլի՝ հակահեղափոխության դեմ պայքարելու համար։ Մանդատը և գրամը Պետրոգրադից Կովկաս է բերում Կամոն։ Դեկտեմբերի 29-ին «Թուրքահայաստանի մասին» լենինյան դեկրետն ընդունելու կապակցությամբ, որը իմպերիալիզմի լծի տակ տառապող արևմտահայերին տալիս էր ազգային ինքնորոշման լրիվ իրավունք՝ ընդհուպ մինչև կատարյալ անկախություն, Ժողկոմխորհը Կովկասի գործերի արտակարգ կոմիսար Շահումյանին հանձնարարում է «Թուրքահայաստանի» բնակչությանը ամեն տեսակի օգնություն ցույց տալ՝ դեկրետում նշված միջոցառումներն իրականացնելու գործում։

Հայաստանի ինքնորոշման հիմնական սկզբունքները Լենինը Շահումյանի և մյուս հայ բոլշևիկների հետ հանգամանորեն քննարկել էր դեռևս Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ, և Շահումյանը, որպես կոմունիստական կուսակցության Կենտկոմի անդամ և Բաքվի Սովետի նախագահ, կենսագործում էր դրանք, հլնելով լենինյան ազգային քաղաքականության դեկրետներից ու կարգադրություններից։

Դիմելով հեղափոխական մասսաներին, Շահումյանը կոչ էր անում Կովկասում անհապաղ ստեղծել սովետական իշխանություն և սերտ միասնություն հաստատել Սովետական Ռուսաստանի հետ։ «Կովկասը կանգնած է անդունդի եզրին,— գրում էր Շահումյանը,— փրկեցե՛ք նրան։ Ստեղծե՛ք

7 Նույն տեղում, էջ 52։

այստեղ ինտերնացիոնալ բանվորա-գյուղացիական կառավարություն, որը Ռուսաստանի սովետական կենտրոնների ու Ժողովրդական Կոմիսարների Սովետի հետ սերտ միասնություն ստեղծելով՝ վերջ կդնի Կովկասի հակահեղափոխությանը և երկրի բանվոր ու գյուղացի բնակչությանը կառաջնորդի դեպի լուսավոր ապագան, դեպի սոցիալիզմի թագավորությունը»[8]։

Շահումյանը բազմիցս ընդգծում էր Բաքվի պրոլետարիատի առանձնահատուկ դերը, նրա սրբազան պարտքը Անդրկովկասի հակահեղափոխական ուժերի դեմ սովետական իշխանության հաղթանակի համար մղվող պայքարում, Անդրկովկասի բանվորներին և գյուղացիներին օգնելու գործում։ «Ես վստահություն եմ հայտնում,— հայտարարում է Շահումյանը Բաքու քաղաքի և նրա շրջանների Սովետի նիստում տված զեկուցման մեջ,— որ Բաքվի Սովետը իր դիրքի բարձրության վրա կլինի և կկատարի այն խնդիրները, որ դրված են իր վրա։ Մեզ գուցե և վիճակվի նույնիսկ ընկնել իբրև հակահեղափոխության զոհեր, բայց մենք պետք է կատարենք մեր պարտքը հանուն սոցիալիստական հեղափոխության»[9]։

Բաքվի պրոլետարիատը Շահումյանի, Ջափարիձեի, Ազիզբեկովի, Ֆիոլետովի, Կորգանովի և մյուս անձնվեր բոլշևիկների ղեկավարությամբ պատվով էր կատարում իր պարտքը Սովետական Ռուսաստանի նկատմամբ։ 1918 թ. մարտին, երբ թուրքական հրոսակախմբերը շարժվում էին դեպի Անդրկովկասի խորքերը, իսկ մուսավաթական նացիոնալիստները ձգտում էին գավթել Բաքուն, Շահումյանի ղեկավարությամբ ստեղծվում է Բաքու քաղաքի և նրա շրջանների հեղափոխական պաշտպանության կոմիտե, որն այդ ժամանակ ռազմական ու քաղաքական բարձրագույն օրգանն էր և միավորում էր Բաքվի և նրա շրջանների սովետական կազմակերպությունները։ Կոմիտեն դիմում է հեղափոխությանը հավատարիմ բոլոր ուժերին, կոչ անելով համախմբվել իր շուրջը և պատրաստ լինել մինչև արյան վերջին կաթիլը կռվելու Սովետի գրոշի ներքո։

1918 թ. ապրիլի 13-ին Շահումյանը Բաքվից ընդարձակ նամակով հայտնում էր Ժողովրդական Կոմիսարների խորհրդին, որ մարտի 30-ից մինչև ապրիլի 1-ը Բաքվում կատաղի մարտեր էին տեղի ունենում հեղափոխական և հակահեղափոխական ուժերի միջև, որոնց ընթացքում թշնամին կատարելապես ջախջախվեց և Սովետը վերջնականապես ամրապնդվեց։ Ելնելով դրանից, Շահումյանն առաջարկում էր ազգայնացնել նավթային արդյունաբերությունը, բանկերը, ծովային տրանսպորտը և անհրաժեշտ օգնություն խնդրում[10]։ Վ. Ի. Լենինն անմիջապես պատասխանում է Շահումյանի այս նամակին և մատնանշում է Մոսկվայի հետ կապ պահպանելու ուղիները[11]։

Լինելով ստեղծագործական մարքսիզմի ականավոր ներկայացուցիչներից մեկը, հիանալի ըմբռնելով սովետական իշխանության լենինյան քաղաքականությունը, իմաստնացած դժվարին պայքարի հարուստ փորձով, Շահումյանը կարողանում էր ճիշտ կողմնորոշվել ու հմտորեն կենսագործել բոլշևիզմի ստրատեգիայի և տակտիկայի սկզբունքները Կովկասի բարդ ու հակասական իրադրության կոնկրետ պայմաններում, երբ երկրամասը նացիոնա-

8 Նույն տեղում, էջ 69—70։
9 Նույն տեղում, էջ 120։
10 Նույն տեղում, էջ 143—147։
11 Տե՛ս В. И. Ленин, Полное собрание сочинений, т. 50, էջ 67։

լիստական կուսակցությունների ու սպիտակգվարդիականների հակաժողովրդական գործողությունների հետևանքով կտրվել էր Սովետական Ռուսաստանից և անսահման դժվար էր դարձել իրականացնել կապը կենտրոնական իշխանությունների, Լենինի հետ։ Իր կուսակցական ու պետական գործունեության ընթացքում Շահումյանը միշտ խստորեն հաշվի էր առնում Կովկասի սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանների առանձնահատկությունները, նրա ժողովուրդների տրադիցիաներն ու սովորությունները։

Շահումյանը բազմիցս նշում էր, որ Անդրկովկասում առկա են ռեալ ուժեր երկրամասը թուրքական զավթիչներից պաշտպանելու համար։ Նա գտնում էր, որ ճանաչելով Սովետական Ռուսաստանի իշխանությունը և հենվելով հեղափոխական ուժերի, պրոլետարական Բաքվի վրա, հնարավոր է ոչ միայն ջախջախել ու դուրս շպրտել թուրքական զորքերին նրանց գրաված տերիտորիայից, այլև ազատագրել Հայաստանի ու Վրաստանի՝ նրանց զավթած վայրերը, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանը։

* * *

1918 թ. առաջին կեսին Բաքուն դարձել էր սովետական իշխանության բազան ամբողջ Անդրկովկասում։ Ապրիլի 25-ին բոլշևիկների ղեկավարությամբ ստեղծվում է Բաքվի ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ, որի նախագահը և արտաքին գործերի կոմիսարը Շահումյանն էր։ Կոմիսարներ էին. ներքին գործերի՝ Պ. Ջափարիձեն, ժողովրդական տնտեսության՝ Ի. Ֆիոլետովը, ռազմական և ծովային՝ Գ. Կորգանովը, քաղաքային տնտեսության՝ Ն. Նարիմանովը, լուսավորության՝ Ն. Կոլեսնիկովան, արդարադատության՝ Ա. Կարինյանը։ Ապա նահանգային կոմիսար հաստատվեց Մ. Ազիզբեկովը, աշխատանքի կոմիսար՝ Յ. Զևինը, հողագործության կոմիսար՝ Ձաֆա Էսեռ Մ. Վեզիրովը։ Սրանք բոլորն էլ հեղափոխության բովում կոփված, ժողովրդի գործին նվիրված ինտերնացիոնալիստներ էին, սովետական իշխանության համար մղվող պայքարի առաջամարտիկներ։ Բարձր գնահատելով Բաքվի կոմունայի և նրա ղեկավարների ծառայությունները, Լ. Ի. Բրեժնևն ասել է. «Հերոսության և անձնվիրության փառավոր էպոպեա էր Բաքվի կոմունայի գործունեությունը։ Այն գլխավորում էին Ստեփան Շահումյանը, Մեշադի Ազիզբեկովը, Ալյոշա Ջափարիձեն, Իվան Ֆիոլետովը, Գրիգորի Կորգանովը, Յակով Զևինը, Միր Հասան Վեզիրովը և լենինյան գվարդիայի այլ խիզախ մարտիկներ։ Նրանց անունները արդեն ինքնըստինքյան վառ կերպով արտահայտում են ինտերնացիոնալիզմի այն հրաշալի տրադիցիաները, որոնցով վաղուց ի վեր հռչակված էր Բաքվի պրոլետարիատը»[12]։

Բաքվի ժողկոմխորհի դեկլարացիայում, որը ստորագրել էին Շահումյանն ու մյուս կոմիսարները, նշվում էր, որ նա «ամենասերտ կերպով կապված կլինի համառուսաստանյան կենտրոնական իշխանության հետ, և հարմարվելով տեղական պայմաններին՝ կենսագործելու է Ռուսաստանի բանվորա-գյուղացիական կառավարության՝ ժողովրդական Կոմիսարների Խորհրդի բոլոր դեկրետներն ու կարգադրությունները»։ Դեկլարացիայում ընդգծվում էր, որ մարտի օրերին տարած հաղթությունից հետո Բաքվի Սովետը լիիշխան

12 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով։ Ճառեր և հոդվածներ, հատ. 3, Երևան, 1972, էջ 170—171։

տեր է դարձել Բաքու քաղաքում ու շրջապատում և պայքարում է ամբողջ Անդրկովկասում ու Դաղստանի մարզում սովետական իշխանություն հաստատելու համար[13]։

Գերմանա-թուրքական և անգլիական ինտերվենտների գերակշռող ուժերի առկայության, ներքին նացիոնալիստական դավաճանների դեմ մղված պայքարի դժվարին պայմաններում Բաքվի Ժողկոմխորհին հաջողվում է իրականացնել մի շարք սոցիալիստական վերափոխումներ առևտրական նավատորմում, նավթի ու ձկնորսության արդյունաբերության մեջ, բանկերի ազգայնացման, կալվածատերերի ու բեկերի հողերի բռնագրավման և դրանք գյուղացիներին հանձնելու, 8-ժամյա աշխատանքային օր հաստատելու, մատակարարման գործը կազմակերպելու, բազմազգ պրոլետարիատի և բոլոր աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակությունն ապահովելու ուղղությամբ։ Կատարելով իր ինտերնացիոնալ պարտքը, Բաքվի պրոլետարիատն իր հերթին մեծ օգնություն էր կազմակերպում Սովետական Ռուսաստանին։ Միայն մայիս ամսին Ռուսաստան է ուղարկվել ավելի քան 16,5 միլիոն փութ նավթամթերք, իսկ հունիսին՝ ավելի քան 25 միլիոն փութ։ Այս բոլոր գործերում մեծ էին Շահումյանի ծառայությունները, նրա անձնական ներդրումը որպես կուսակցության Կենտկոմի անդամի, Կովկասի գործերի արտակարգ կոմիսարի, Բաքվի Ժողկոմխորհի նախագահի, Բաքու քաղաքի հեղափոխական պաշտպանության կոմիտեի ղեկավարի։

Կուսակցական և պետական ականավոր գործչի փայլուն տաղանդն ու հմտությունները, անսպառ եռանդը, վճռականությունն ու հզոր կամքը, խոր հավատը սովետական իշխանության ու մասնավորապես Բաքվի պրոլետարիատի, Ս. Օրջոնիկիձեի պատկերավոր արտահայտությամբ՝ «պրոլետարական մեծ հեղափոխության մեծ ժամապահի» անսպառ հնարավորությունների նկատմամբ Շահումյանն օգտագործում էր Անդրկովկասում սովետական իշխանության բազմաթիվ թշնամիների դեմ պայքարելու և նրա հաղթանակն ապահովելու, Բաքուն Սովետական Ռուսաստանի կողմում պահելու համար։

«Բաքվի պրոլետարիատն առաջինն էր,— հպարտությամբ հայտարարում էր Շահումյանը 1918 թ. մայիսին,— որը հռչակեց իր համերաշխությունը Ռուսաստանի Հոկտեմբերյան բանվորա-գյուղացիական հեղափոխության հետ և դեմ գնաց Անդրկովկասյան կոմիսարիատին և Սեյմին։ Բաքվի պրոլետարիատն այժմ էլ բարձր է պահում Սովետական իշխանության դրոշը և պատրաստ է պայքարելու ամբողջ Անդրկովկասի բանվորների և գյուղացիների ազատության և երջանկության համար»[14]։

Բաքվի Ժողկոմխորհի լուսավորության ժողկոմ, 1904 թ. ՍՄԿԿ անդամ Ն. Ն. Կոլեսնիկովան, ընդգծելով Շահումյանի մեծ ծառայությունները Բաքվի կոմունայի ստեղծման ու ղեկավարման գործում, նշել է. «Շահումյանի՝ որպես մասսաների ղեկավարի տաղանդը առանձնապես վառ կերպով դրսևորվեց 1917—1918 թվականներին՝ Բաքվում սովետական իշխանության համար մղված պայքարի ժամանակաշրջանում։ Նա հաստատուն կերպով կիրառում էր ամբողջ Սովետական Ռուսաստանի հետ Ադրբեջանի միասնության գիծը»[15]։

---

13 Ստ. Շահումյան, երկեր, հատ. 3, էջ 157—162։
14 Նույն տեղում, էջ 242։
15 «Բաքվի 26 կոմիսարների հիշատակին. փաստաթղթեր և նյութեր». Բաքու, 1968, էջ 93։

1904 թ. ՍՄԿԿ անդամ, կուսակցական և պետական ականավոր գործիչ Ս. Մ. Էֆենդիևը գրել է. «Ստեփան Շահումյանը Բաքվի կոմունայի ոգեշնչողն էր, նրա խելքը, ուղեղը, գիտելիքը, միտքը։ Ստեփանի ճառերի երկաթե տրամաբանությունը դիպուկ կերպով հարվածում և ջախջախում էր Կոմունայի թշնամիներին։ Նա նավթագործների բանակի սիրելի առաջնորդն էր»[16]։

Երկար տարիներ աշխատելով Ադրբեջանում և հատկապես Բաքվում, ղեկավարելով Բաքվի լեգենդար կոմունան, հայ ժողովրդի մեծ զավակ Շահումյանը դարձավ եղբայրական ժողովրդի սիրելին։ «Ստեփան Շահումյանը պրոմԷթեոսների պլեադայից է,— ասել է Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Հ. Ա. Ալիևը,— մարքսիզմ-լենինիզմի փայլուն տեսաբան, պրոֆեսիոնալ հեղափոխական Ստեփան Շահումյանը դարձավ Ադրբեջանի ինտերնացիոնալ բանվոր դասակարգի, Անդրկովկասի աշխատավորության հոգին ու սիրտն այն անձնվեր պայքարում, որ նրանք մղում էին ցարական ինքնակալության, կալվածատերերի ու կապիտալիստների ճնշման դեմ, սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար»[17]։

Լինելով բոցաշունչ ինտերնացիոնալիստ, հավասարաչափ սիրված Կովկասի բոլոր ազգերի աշխատավորության կողմից, Շահումյանը հետևողականորեն պրոպագանդում և կենսագործում էր ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամության ու եղբայրության, ռուս մեծ ժողովրդի, հեղափոխական Ռուսաստանի հետ սերտ դաշինքի ու անքակտելի միասնության սկզբունքը, առանց որի հնարավոր չէր լինի Կովկասի իսկական անկախությունն ու ազատությունը։ Բաքվի կոմունայի ամենածանր օրերին Շահումյանը խոր հավատով լի հայտարարում էր. «...Մեր միավորվելը, ամբողջ հեղափոխական Ռուսաստանի աջակցությամբ՝ մեզ կհասցնի մեր հաղթանակին, մեր թշնամիների պարտությանը և Անդրկովկասում իսկական աղատություն հաստատելուն»[18]։

Բաքվի ժողկոմխորհը որպես Անդրկովկասում սովետական իշխանության առաջին լիազոր մարմին, Շահումյանի գլխավորությամբ հաղթահարելով արտաքին և ներքին բոլոր դժվարությունները, Սովետական Ռուսաստանի օրինակով վճռական ու հետևողական կերպով առաջ էր տանում Վ. Ի. Լենինի կողմից մշակված սոցիալիստական վերակառուցումների ծրագիրը։

Բաքվի կոմիսարների համար անգնահատելի օգնություն էր Վ. Ի. Լենինի «Սովետական իշխանության հերթական խնդիրները» աշխատությունը, որը տպագրվեց ապրիլի 28-ին «Պրավդա» և «Իզվեստիա» թերթերում, տարածվեց ամբողջ երկրում, հասավ Բաքու՝ բերելով իր հետ գիտականորեն հիմնավորված մի պլան սոցիալիստական էկոնոմիկայի հիմունքների ստեղծման համար մղվող պայքարում։

Շահումյանը սիստեմատիկաբար հաղորդում էր Լենինին, թե ինչպես են իրենք կենսագործում սովետական իշխանության հերթական խնդիրները՝ սոցիալիստական շինարարության պլանը, պատմում էր այդ գործում իրենց դժվարությունների մասին։ Վ. Ի. Լենինից, ՌՍՖՍՀ Ժողկոմխորհից ստացած նամակներում և գրություններում, որոնք հիմնականում հասցեագրվում

16 Նույն տեղում, էջ 137։
17 «Սովետական Հայաստան», 16 օգոստոսի 1975։
18 Ս տ. Շ ա հ ու մ յ ա ն, Երկեր, հատ. 3, էջ 226։

Լին Շահումյանին, անհրաժեշտ ցուցումներ և դիրեկտիվներ էին տրվում քաղաքական, ռազմական, տնտեսական բոլոր հարցերի վերաբերյալ։

Լիովին վստահելով Շահումյանին որպես Բաքվի կոմունայի ղեկավարի, Վ. Ի. Լենինը մեծ ուշադրությամբ ու հոդատարությամբ հետևում էր նրա ողջ գործունեությանը, Բաքվի պրոլետարիատի հերոսական պայքարին, հավանություն տալիս Շահումյանի ղեկավարությամբ Բաքվի բոլշևիկների քաղաքականությանը, ցուցումներ տալիս սոցիալիստական հեղափոխության հաղթանակը Բաքվում ապահովելու համար։ 1918 թ. մայիսի 14-ին Շահումյանին ուղղված հեռագրում Լենինը գրում էր. «Թանկագին ընկեր Շահումյան։ Շատ շնորհակալ եմ նամակի համար։ Մենք հրճվանքի մեջ ենք Ձեր հաստատակամ և վճռական քաղաքականությունից։ Կարողացեք դրան միացնել այն ամենաղգույշ դիվանագիտությունը, որն անպայման թելադրվում է այժմյան դժվարագույն դրությամբ և մենք կհաղթենք։

Դժվարություններն անհաշիվ են։ Առայժմ մեզ փրկում են միայն իմպերիալիստների հակասությունները, կոնֆլիկտներն ու պայքարը։ Կարողացեք օգտագործել այդ կոնֆլիկտները. առայժմ հարկավոր է դիվանագիտություն սովորել»[19]։

Հունիսի 30-ին Բաքվի բոլշևիկյան կազմակերպության կոնֆերանսում ՌՍՖՍՀ-ում Բաքվի ԺողկոմխորՀի ներկայացուցիչ Ս. Մ. Տեր-Գաբրիելյանը, զեկուցելով Սովետական Ռուսաստան կատարած իր ուղևորության և Վ. Ի. Լենինի հետ ունեցած հանդիպումների մասին, ասում էր. «Ընկեր Լենինը բազմիցս իր հիացմունքն էր հայտնում Բաքվի Սովետի և նրա համար թանկագին ընկեր Շահումյանի քաղաքականությամբ։ Նա հայտարարում էր, որ մշտապես պատրաստ է պաշտպանելու Բաքվի պրոլետարիատին բարոյապես և նյութապես... «Ամեն ինչ Բաքվի համար» խոսքերը ինքը լսում էր ոչ միայն առաջնորդների շուրթերից, այլև առանձին գործարաններում՝ բանվորներից, որոնք իրենց երջանիկ էին համարում ողջունելու Բաքվի տոկուն պրոլետարիատին»[20]։

Բաքվի կոմունայի գոյության մոտ 100 օրվա ընթացքում Շահումյանը մշտապես գտնվում էր հերոսական իրադարձությունների բուն կենտրոնում։ Նա ամեն օր ելույթ էր ունենում, զեկուցումներ տալիս բանվորական, գյուղացիական, զինվորական մասսաների համար, հաճախակի լինում էր նավթագործների մոտ, զինվորական ակումբներում, ռազմաճակատում, Սովետի նիստերում, տպարանում, որտեղ շարում էին ԺողկոմխորՀի դեկրետներն ու կարգադրությունները, կոմունայի թերթերը։ Նրանց էջերում տպագրվում էին Շահումյանի հոդվածները, բոլշևիկյան ճշմարիտ խոսքը, կոչերը՝ ուղղված բոլոր ազգերի բանվորներին, զինվորներին, գյուղացիներին, աշխատավոր այն մասսաներին, որոնք որոշում էին հեղափոխության բախտն Անդրկովկասում։

Շահումյանի բազմաթիվ զեկուցումներն ու հոդվածները մոբիլիզացնում էին հեղափոխական մասսաներին՝ պաշտպանելու և ընդլայնելու սովետական իշխանությունը։ Նրանք միաժամանակ հարուստ ու ճշմարտացի փաստաթղթ-

---

19 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 359 (նամակի ամսաթիվը սխալմամբ նշված է փետրվարի 14)։

20 «Бакинский рабочий», 30 հունիսի 1918։

թեր են Բաքվի կոմունայի հերոսական պատմության ուսումնասիրման համար։

1918 թ. մայիսի վերջին, երբ Բաքվի կոմունայի դեմ էին շարժվում Անդրկովկասյան սեյմի կանոնավոր զորամասերը և գերմանական ու թուրքական զորքերը, Շահումյանը «Հաղթանակի գրավականը» հոդվածում կոչ էր անում ուժեղացնել պայքարը միջազգային ռեակցիայի և ներքին հակահեղափոխության դեմ։ «Միայն բանվորների հեղափոխական կոփվածությունն ու արտակարգ տոկունությունը կարող է մեր հաղթանակի հուսալի գրավականը լինել»[21],— գրում էր նա։ Կոմունայի մասին դասախոսության մեջ Շահումյանը վերլուծում էր կոմունայի առաջին օրինակը հանդիսացող 1871 թ. Փարիզի կոմունայի դասերը, ապա հենվելով Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ծայրամասերի և կենտրոնի բազմաթիվ քաղաքներում հիմնված աշխատանքային կոմունաների փորձի վրա, կոնկրետացնում էր այն Բաքվի կոմունայի օրինակով և խոր հույս հայտնում, որ ամբողջ Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների, համայն Ռուսաստանի պրոլետարիատի աջակցությամբ Բաքվի աշխատանքային կոմունան կամրանա և կհանդիսանա Անդրկովկասի ողջ աշխատավոր ժողովրդի ապատարարը[22]։ Շահումյանը ելնում էր բանվորներին ուղղված Վ. Ի. Լենինի այն խոսքերից, որ «Ռուսաստանը պետք է դարձնել Սովետների հանրապետություն, կոմունաների հանրապետություն»[23]։

Շահումյանն ամեն ինչ անում էր Բաքվի կոմունան ամրապնդելու, այն բազմաթիվ թշնամիներից պաշտպանելու համար։ Այցելելով ռազմաճակատ և տեղում պարզելով իրադրությունը, Շահումյանը 1918 թ. հուլիսի 16-ին Բաքվի Սովետի և շրջանային Սովետների, նավային կոմիտեների և Կովկասյան կարմիր բանակի ռազմահեղափոխական կոմիտեի արտակարգ նիստում «Ռուսաստանի և Անդրկովկասի քաղաքական և ռազմական դրության մասին» զեկուցման մեջ ասում էր. Ուժերի հարաբերակցությունը պարզելուց հետո ես եկա այն եզրակացության, որ մեր միջոցները դեռ հեռու են սպառված լինելուց։ ...Եթե մենք, ինչպես մինչև այժմ, պահպանենք միասնական ճակատն անկախությունը պահպանելու հարցում և դիմենք պրոլետարիատին՝ կոչ անելով զենք վերցնել մեր անկախությունը պաշտպանելու համար, ապա Բաքվի պրոլետարիատը ուժ կգտնի իր մեջ, որպեսզի իր միջից մի քանի հազար մարդ առանձնացնի զորքի համար, որը կշարժվի օգնելու ռազմաճակատում գտնվող մեր ընկերներին։ Այս համոզմունքն ինձանից ոչ ոք չի կարող խլել»[24]։ Իր զեկուցումն ավարտելով անգլիացիների օգնությանը դիմելու առաջարկությունների վճռական մերժումով, Շահումյանը հայտարարում էր. «Մեր մեջ բավականին հեղափոխական զգացում ու գիտակցություն կգտնվի, որպեսզի ասենք. ո՛չ, մենք չենք կարող հանձնվել օտարերկրյա իմպերիալիստների ձեռքը, մենք կպայքարենք մեր անկախության համար ու կպաշտպանենք այն մեր ուժերով»[25]։

Սակայն 1918 թ. կեսերին Անդրկովկասի և Սովետական Ռուսաստանի

21 Ս տ. Շ ա հ ու մ յ ա ն, Երկեր, հատ. 3, էջ 206։
22 Տե՛ս նույն տեղում, էջ 255։
23 Տե՛ս նույն տեղում, էջ 250։
24 Նույն տեղում, էջ 365։
25 Նույն տեղում, էջ 371։

արտաքին և ներքին խիստ ծանր ու բարդ իրադրությունը Բաքվի կոմունային հնարավորություն չտվեց հաղթահարելու միջազգային իմպերիալիզմի ու ներքին հակահեղափոխության սաստկացող հարձակումները։ Ուժերն անհավասար էին, իսկ նորաստեղծ Սովետական Ռուսաստանը, չնայած ամեն ինչ անում էր բաքվեցիներին օգնելու համար, ինքն էլ էր գտնվում իմպերիալիստական ինտերվենտների ու սպիտակգվարդիական ուժերի կրակե օղակի մեջ, անջատված էր Անդրկովկասից հակահեղափոխական բանդաների զավթած Հյուսիսային Կովկասի գոտիով։ Կովկասի վրա էր ուղղված և՛ ֆրանսիական, և՛ անգլիական, և՛ գերմանական բուրժուազիայի հայացքը, նրանք բոլորն էլ տենչում էին «իրենց ձեռքն առնել Կովկասի հարստությունները»[26]։

Այս պայմաններում էլ Բաքվի ժողկոմխորհը անսասան էր և օգտվելով Բաքվի պրոլետարիատի լիակատար վստահությունից ամեն ինչ անում էր Բաքվում սովետական իշխանությունն ամրապնդելու համար։ Հունիսի 15-ին Բաքվի Սովետը, լսելով Շահումյանի զեկուցումը Անդրկովկասի քաղաքական դրության մասին՝ գերմանա-թուրքական գիշատիչների ագրեսիվ գործողությունների կապակցությամբ, լիովին հավանություն է տալիս Բաքվի ժողկոմխորհի հեղափոխական ծրագրին և պրոլետարիատի ու կարմիր բանակի անունից հայտարարում է, որ մինչև վերջ կպայքարի հարձակվող գերմանա-թուրքական ավազակախմբերի դեմ, կպաշտպանի իրենց ազատությունը և անքակտելի կապը Ռուսաստանի Սովետական մեծ հանրապետության հետ։ «Մենք հայտարարում ենք,— ասվում էր Բաքվի Սովետի բանաձևում,— որ ինչպես հաղթության, այնպես էլ պարտության դեպքում մենք գերմանական գիշատիչներին չենք տա ժողովրդի աշխատանքով ձեռք բերված ոչ մի կաթիլ նավթ»[27]։ 1918 թ. հունիսի 29-ին Վ. Ի. Լենինին ուղարկած հեռագրում Շահումյանը գրում էր. «Կովկասում ընդհանուր դրությունը գնալով բարդանում է, բայց մենք մեզ առույգ ու վստահ ենք զգում»[28]։

Օգտվելով իրենց ռազմական ուժերի գերակշռությունից և անդրկովկասյան նացիոնալիստների դավաճանական քաղաքականությունից, իրականացնելով իրենց նվաճողական պլանները, գերմանա-թուրքական ավազակախմբերը և անգլիական զավթիչները շարժվում էին դեպի Բաքու։ «...Էնվերն ու թուրքական կառավարությունը, —գրել է գերմանական բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Լյուդենդորֆը,— ավելի շատ մտածում էին Կովկասի նկատմամբ ունեցած իրենց պանիսլամական նպատակների մասին, քան Անգլիայի դեմ մղվող պատերազմի»[29]։ Թուրքերից Բաքուն պաշտպանելու քողի տակ նրա նավթային հարստություններին էին ուզում տիրանալ բրիտանական զավթիչները։ «Բաքվի նշանակությունը հսկայական էր, և նրան տիրանալու ամեն մի փորձ կարդարանար անտարակույս»[30],— գրել է անգլիական գեներալ Դենստերվիլը։

---

26 Պ. Ա. Ջափարիձե, Ընտիր հոդվածներ, ճառեր և նամակներ. 1905—1918 թթ., Երևան, 1970, էջ 306։

27 Ստ. Շահումյան, երկեր, հատ. 3, էջ 309։

28 Նույն տեղում, էջ 333։

29 Э. Людендорф, Мои воспоминания о войне 1914—1918 гг., т. 2. М., 1924, էջ 187։

30 Генерал-майор Денстервиль, Британский империализм в Баку и Персии 1917—1918 (воспоминания), Тифлис, 1925, էջ 123։

Այս ծանր իրավիճակից օգտվելով, աջ էսեռները, դաշնակցականները և մենշևիկները Բաքվի Սովետի 1918 թ. հուլիսի 25-ի արտակարգ նիստում, 23 ձայնի գերակշռությամբ (259 ընդդեմ 236-ի), բանաձև են անցկացնում անգլիական զորքերին Բաքու հրավիրելու և կոալիցիոն կառավարություն կազմելու մասին։ Այդ որոշումը որակելով որպես դավաճանություն, Շահումյանը հայտարարում է, որ ինքը չի կարող իր վրա որևէ պատասխանատվություն վերցնել հակահեղափոխության այդ քայլի համար։

Համառուսաստանյան Կենտգործկոմի, Մոսկվայի Սովետի, Մոսկվայի ֆաբրիկա-գործարանային կոմիտեների և արհեստակցական միությունների 1918 թ. հուլիսի 29-ի միացյալ նիստում արտասանած ճառում Վ. Ի. Լենինը, լիովին հավանություն տալով Շահումյանի գլխավորած Բաքվի բոլշևիկների այս քաղաքականությանը, ասում էր. «Անգլո-ֆրանսիական իմպերիալիստների հետ որևէ համաձայնություն կնքելուց վճռականորեն հրաժարվելը Բաքվի ընկերների միակ ճիշտ քայլն է... ոչ թե խոսքով, այլ գործով սոցիալիստների համար միակ արժանի քայլը»[31]։

Սակայն այս բոլորովին չէր նշանակում, թե Շահումյանի ղեկավարած կոմունան որոշել էր իշխանությունը հանձնել առանց պայքարի։ Հուլիսի 26-ին Բաքվի Սովետի գործկոմի ընդլայնված նիստը, իսկ մեկ օր անց՝ բոլշևիկների Բաքվի քաղաքային կոնֆերանսը ընդունում են Շահումյանի ներկայացրած բանաձևը՝ ընդհանուր զորահավաք հայտարարելու և Ժողկոմխորհի ղեկավարությամբ Բաքվի պաշտպանությունը կազմակերպելու մասին։ Շահումյանը կոչ է անում հեղափոխական ուժերին՝ հաղթել կամ մեռնել պատվով։ Բաքվի բանվորներին ուղղված կոչում մերկացնելով դաշնակցական, էսեռական ու մենշևիկյան դեմագոգներին, որոնք իշխանությունից Ժողկոմխորհի հրաժարականը որակում էին որպես «բոլշևիկների փախուստ ու վախկոտություն», Շահումյանը նշում է, որ հրաժարական տալով իրենք որոշել էին «փրկել Ռուսաստանի Սովետական իշխանությանը հավատարիմ հեղափոխական զորքերը, որպեսզի սպասելով Աստրախանից եկող զորքերին, նրանց հետ միասին կռիվ հայտարարենք երկու ճակատում՝ թուրքական ու անգլիական իմպերիալիզմին և պաշտպանենք Բաքուն հեղափոխական Սովետական Ռուսաստանի համար»[32]։ 1918 թ. օգոստոսի 17-ին Բաքվի պաշտպանությունը կազմակերպելու գծով Բաքվի Ժողկոմխորհի գործունեության մասին Աստրախանից Լենինին ուղարկված հեռագրում նշվում էր. «Սովետի արտակարգ ժողովում անգլիացիներին հրավիրելու մասին հայտնի բանաձևը ընդունվելուց հետո Ժողկոմխորհը, թեև ձևականորեն հրաժարական էր տվել, բայց փաստորեն շարունակում էր իր աշխատանքը»[33]։

Այդ ահեղ օրերին Շահումյանը և Բաքվի մյուս կոմիսարները մինչև վերջ մնացին իրենց մարտական հեղափոխական դիրքերում։ Նրանք շարունակում էին աշխատել Սովետում, անցկացնում էին կուսակցական խորհրդակցություններ, կոնֆերանսներ, լույս էին ընծայում թռուցիկներ, թերթեր, նախապատրաստվում էին նոր պայքարի։ Սովետական զինված ուժերը գլու-

31 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 9։

32 Ս. Շահումյան, Երկեր, հատ. 3, էջ 398։

33 «Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане. Документы и материалы, 1917—1918 гг.», Баку, 1957, էջ 626։

նրվում էին Բաքվի Պետրովսկի հրապարակում, ծովափին ու նավերի վրա։ Այդ դեպքերի ակտիվ մասնակից Սուրեն Շահումյանի արտահայտությամբ բոլշևիկները ներկայացնում էին «պետություն պետության մեջ»։ Շահումյանն ասում էր. «Մենք գերադասում ենք մեռնել հեղափոխականների պանծալի դիրքերում, քան թե փրկել մեր կյանքը մատնության ու դավաճանության գնով»։ 1918 թ. օգոստոսի 11-ին Ս. Շահումյանը «Бакинский рабочий» թերթում հրապարակում է իր վերջին՝ «Նոր իշխանության կերպարանքը» և «Անաղնիվ զրպարտիչներ» հոդվածները։ Մինչև վերջ մերկացնելով օտարերկրյա սվինների օգնությամբ ստեղծված էսեռա-դաշնակցական-մենշևիկյան նոր իշխանությունը՝ «Յենտրոկասպիի դիկտատուրան», որը դաժան հաշվեհարդար էր տեսնում հեղափոխական ուժերի դեմ, նա ընդգծում էր, որ Բաքվի Ժողկոմխորհը հավատարիմ է մնացել Սովետական Ռուսաստանին, վճռականորեն ու հետևողական կենսագործել է Վ. Ի. Լենինի ցուցումները։ «Անաղնիվ զրպարտիչներ» հոդվածի վերջում Շահումյանն ավելացնում էր. «Դաշնակցականների թերթն առանձնապես ջանում է անձամբ իմ դեմ գրգռել մոլորվող մութ մասսաներին և ձգտում է ինձ հանձնել դրանց ինքնադատաստանին։ Դա դժվար գործ չէ։ Դա, թերևս, ձեզ հաջողվի, բայց, պարոններ, այդ ձեզ չի օգնի։ Մեզ համար ավելի կարևոր է գիտակից բանվորների դատաստանը, պատմության դատաստանը և նա ձեզ համար ավելի սոսկալի կլինի, քան ամբոխի ինքնադատաստանը, որին դուք դիմում եք»[34]։

1918 թ. օգոստոսի 10-ին բոլշևիկների Բաքվի կազմակերպության կոնֆերանսը որոշում է սովետական իշխանության օրգանները ժամանակավորապես էվակուացնել Աստրախան։ Թողնելով Բաքուն Ս. Շահումյանը, Ա. Ջափարիձեն, կենտրոնական Ժողկոմխորհի կողմից Բաքվի շրջանի ռազմական կոմիսար Գ. Պետրովը և Կասպիական ռազմական նավատորմիկի կոմիսար Վ. Պոլուխինը դեկլարացիա են ստորագրում սովետական զորքերի էվակուացիայի մասին, որում նշվում էր, որ հեղափոխական ռազմաճակատ Բաքվում այլևս չկա, այլ կա իմպերիալիստական ռազմաճակատ, պայքարում են երկու ուժեր, որոնք հավասարապես թշնամի են Ռուսաստանի բանվորագյուղացիական սովետական իշխանությանը։ «Այդ պահից,— ասվում էր դեկլարացիայում,— Ռուսաստանի սովետական իշխանության քաղաքական ու վինվորական ներկայացուցիչները և Ռուսաստանից ուղարկված ռազմական ուժերը չեն կարող մնալ Բաքվում և անգլիական իմպերիալիստների աջակիցները լինել, աջ էսեռների, մենշևիկների և դաշնակցականների ազդեցությամբ կատարված դավաճանության մասնակիցները լինել։

Ցավ ի սիրտ, նզովքը շրթունքներին, նրանք, որ այստեղ էին եկել Բաքվի բանվորների հետ միասին կռվելու և մեռնելու Սովետական իշխանության համար, հարկադրված են հեռանալ Բաքվից։

Բայց թողնելով այս քաղաքը... նրանք հույս ունեն, որ բանվորագյուղացիական Ռուսաստանը դարձյալ կգա Բաքու, և Բաքվի պրոլետարիատը կրկին կկապվի հարազատ հեղափոխական Ռուսաստանի հետ և նորից կկանգնի Սովետական Սոցիալիստական Ռուսաստանի դրոշի ներքո»[35]։

---

34 Ս տ. Շ ա հ ո ւ մ յ ա ն, երկեր, հատ. 3, էջ 410։

35 Նույն տեղում։

Դեկլարացիան հեռագրով հաղորդվում է Մոսկվա՝ Վ. Ի. Լենինին և Յա. Մ. Սվերդլովին։

Օգոստոսի 14-ին Բաքվի կոմիսարները և կարմիր բանակի զորամասերը Շահումյանի գլխավորությամբ նավով մեկնում են դեպի Աստրախան, սակայն երկու օր հետո «Յենտրոկասպիի դիկտատուրայի» ռազմանավերը Ժիլոյ կղզու մոտ հրետանային կրակի սպառնալիքի տակ ստիպում են նրանց վերադառնալ Բաքու։ Շահումյանը, Ջափարիձեն, Ֆիոլետովը, Ազիզբեկովը և Բաքվի մյուս կոմիսարները ձերբակալվում են ու բանտարկվում։

Բաքվի կոմունայի հերոսական պատմության գիտական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սովետական իշխանությունը Բաքվում կարող էր ջախջախել ներքին հակահեղափոխությանը, բայց արտաքին թշնամիների գերակշռող ուժերի առկայության պայմաններում նա չէր կարող հաղթահարել գերմանա-թուրքական և անգլիական խմբավորումների միաժամանակյա զինված գրոհը, որին պաշտպանում էին իմպերիալիստական բազմաթիվ գործակալներ, Սովետական Ռուսաստանի երդվյալ թշնամի մուսավաթականները, դաշնակցականները, էսեռներն ու մենշևիկները։ Չպետք է մոռանալ, որ այն ժամանակ Բաքուն դարձել էր երկու իմպերիալիստական կոալիցիաների ընդհարման ասպարեզ։ Կովկասում կոմունիստների վիճակը Լենինը համարում էր «առանձնապես դժվար»։ Իր հրճվանքն արտահայտելով Շահումյանի գլխավորած Ժողկոմխորհի հաստատակամ ու վճռական քաղաքականության առթիվ և լիովին վստահելով Շահումյանին, Լենինը նկատի ուներ, որ Բաքվի կոմունան գործում էր արտակարգ բարդ պայմաններում, երբ կովկասյան նացիոնալիստները, դավաճանելով իրենց ժողովրդին, դաշինքի մեջ էին մտել օտարերկրյա զավթիչների հետ։ Ա. Ի. Միկոյանն իր հուշերում գրել է, որ Բաքվի բոլշևիկյան ուժերը ժամանակավորապես դուրս բերելու մասին Շահումյանի ընդունած որոշումը ասես թե ձայնակցում էր Լենինի մտքերին[36]։

Այն բացառիկ պայմաններում, երբ Սովետական Ռուսաստանը բազմաթիվ թշնամիների բլոկադայի մեջ կենաց և մահու պայքար էր մղում իր գոյության համար, Շահումյանը և Բաքվի մյուս կոմիսարները իրենց ճկուն տակտիկայով, հաստատակամությունն ու վճռականությունը դիվանագիտության հետ միացնելու լենինյան ցուցումի հմուտ իրականացմամբ կարողացան ամենահնարավոր բան անել իրենց ինտերնացիոնալ պարտքը սովետական հանրապետության նկատմամբ կատարելու համար։

Շահումյանի, Ջափարիձեի, Ազիզբեկովի, Ֆիոլետովի մեծ հեղինակության ու հմայքի մասին է խոսում նաև այն փաստը, որ 1918 թ. օգոստոսին, երբ նրանք գտնվում էին Բայիլովի բանտում, չնայած «Յենտրոկասպիի դիկտատուրայի» կազմակերպած դաժան տեռորին և բոլշևիկների դեմ ուղղված հալածանքներին, միահանուռ կերպով վերընտրվեցին Բաքվի Սովետի կազմում։ Շուտով Բաքվի կոմունիստական դրուժինային հաջողվում է Շահումյանին և նրա ընկերներին ազատել բանտից։ «Թուրքմեն» նավով նրանք կրկին ուղևորվում են Աստրախան, բայց ճանապարհին նավը անգլիացիների ու նրանց գործակալների կողմից կանգնեցվում է և տարվում Կրասնովոդսկ, որը գտնվում էր էսեռական Անդրկասպյան կառավարության ձեռքին։ Կոմի-

36 Տե՛ս Ա. Ի. Միկոյան, Պայքարի ուղիով, Երևան, 1972, էջ 318։

սարների կյանքը փրկելու համար Սովետական հանրապետության ձեռնարկած միջոցառումները հաջողություն չեն ունենում։ ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողկոմ Գ. Վ. Չիչերինը 1918 թ. սեպտեմբերի 19-ին հեռագրով նոտա է ուղարկում Նիդեռլանդների դեսպանորդ Ուդենդիկին՝ միջնորդության համար, որում ասված էր. «Բաքուն էվակուացնելիս անգլիացիներն իրենց հետ տարել են Բաքվի սովետական կառավարության նախկին անդամներ Շահումյանին, Ջափարիձեին, գլխավոր հրամանատար Պետրովին և ուրիշներին։ Վճռականորեն բողոքում եմ։ Պահանջում եմ նրանց հայրենիք վերադարձնել...»[37]։

Թշնամիները չարախնդում էին, որ իրենց ձեռքն էին ընկել Շահումյանը, որին վաղուց ի վեր «Կովկասյան Լենին» անունն էին տվել, և նրա մերձավոր զինակիցները։ Անգլիական իմպերիալիստներն իրենց նողկալի գործակալներ էսեռների օգնությամբ 1918 թ. սեպտեմբերի 20-ին, Կրասնովոդսկից 207 վերստ հեռավորության վրա, Ախչա-Կույսմա և Պերեվալ կայարանների միջև գաղանաբար գնդակահարում են Բաքվի 26 կոմիսարներին՝ կոմունիստական կուսակցության, բանվոր դասակարգի ազատության գործին մինչև վերջ նվիրված հերոս մարտիկներին՝ Ստեփան Շահումյանին, Ալյոշա Ջափարիձեին, Մեշադի Ազիզբեկովին, Իվան Ֆիոլետովին, Գրիգորի Կորգանովին, Միրհասան Վեզիրովին, Պավել Ջևինին, Գրիգորի Պետրովին, Վլադիմիր Պոլուխինին, Արսեն Ամիրյանին, Սուրեն Հովսեփյանին, Իվան Մալիգինին, Բաղդասար Ավագյանին, Մեեր Բասինին, Մարկ Կոգանովին, Ֆյոդոր Սոլնցևին, Արամ Կոնստանդյանին, Անատոլի Բոգդանովին, Սոլոմոն Բոգդանովին, Արմենակ Բորյանին, Էյժեն Բերգին, Իվան Գաբիշևին, Թադևոս Ամիրյանին, Իվան Նիկոլաշվիլուն, Իրակլի Մետաքսային, Իսայի Միշնեին։

Ստեփան Շահումյանի և նրա մարտական ընկերների արտասանած վերջին խոսքերն էին. «Մենք մեռնում ենք կոմունիզմի համար։ Կեցցե կոմունիզմը»։

Այն գործը, որի համար պայքարեցին ու զոհվեցին Բաքվի 26 կոմիսարները, հաղթանակով պսակվեց։ Ազատարար կարմիր բանակի եղբայրական օգնությամբ Բաքվում և ամբողջ Անդրկովկասում հաստատվեցին սովետական կարգեր։ 1920 թ. սեպտեմբերին, Արևելքի ժողովուրդների համագումարի օրերին, Շահումյանի և մյուս կոմիսարների աճյունները Աշխաբադից, որտեղ նրանք թաղվել էին մինչ այդ, տեղափոխվեցին ու հանդիսավոր կերպով հողին հանձնվեցին Բաքվի Ազատության հրապարակում՝ քաղաքի կենտրոնում, որտեղ հաճախ ելույթ էին ունեցել նրանք։ Սգո միտինգում արտասանած ճառում Նարիման Նարիմանովն ասաց. «Այժմ մենք Սովետական Ադրբեջանի հողին ենք հանձնում մեր լավագույն, թանկագին ընկերներին, որոնք անձնվիրաբար, մինչև վերջին պահը քաջարի կերպով կանգնած մնացին իրենց հեղափոխական պոստերում»։

Տարիներ անց Ազատության հրապարակում, որը վերանվանվեց 26 կոմիսարների անվան հրապարակի, հերոսների շիրիմների վրա կանգնեցվեց մի հոյակապ հուշարձան՝ հավերժական կրակով։ Անշեջ հուրը խորհրդանշում է նրանց անմահությունը։ Իրականացան Շահումյանի մարգարեական խոսքերը, ասված մահվանից քիչ առաջ. «Կգա մեր հաղթանակի օրը, որովհետև ապրում է կուսակցությունը, ապրում է Բաքվի բանվոր դասակարգը»։ Կու-

---

37 «Документы внешней политики СССР», т. 1, М., 1957, էջ 489։

սակցության, Բաքվի պրոլետարիատի կամքով սեպտեմբերի 20-ը դարձել է 26 կոմիսարների հիշատակի օրը, որն ամեն տարի նշվում է կոմունիզմի գործին հավատարմության նշանաբանով։

Մարդկության լավագույն սպագան՝ կոմունիզմը, որի համար հերոսաբար պայքարեցին ու զոհվեցին Ստեփան Շահումյանն ու նրա մարտական ընկերները, այժմ դարձել է իրական հզոր ուժ։ Սովետական Միության կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ՍՍՀՄ-ի ժողովուրդները հաստատորեն գնում են դեպի նորանոր հաղթանակներ։ Նրանք միշտ վառ են պահում Ստ. Շահումյանի և Բաքվի մյուս կոմիսարների պայծառ հիշատակը, որոնք իրենց գեղեցիկ կյանքով, կապիտալիզմի լծից աշխատավորության ազատագրության համար մղած անձնվեր պայքարով անմահ փառք նվաճեցին։ «Ժողովրդի հիշողությունից,— ասել է Լ. Ի. Բրեժնևը,— երբեք չի ջնջվի Բաքվի 26 կոմիսարների սխրանքը, որոնց դաղանաբար սպանեցին անգլիական իմպերիալիստները անդրկասպյան ավազուտներում։ Հերոսների սխրագործությունը հնչեց որպես բոցաշունչ կոչ, նա հեղափոխության դրոշի ներքո համախմբեց կոմունիզմի հաղարավոր խիզախ մարտիկների»[38]։

СТЕПАН ШАУМЯН—РУКОВОДИТЕЛЬ БАКИНСКОЙ КОММУНЫ

(К 100-летию со дня рождения)

Академик АН АрмССР Г. Б. ГАРИБДЖАНЯН

(Резюме)

В статье освещается работа видного деятеля Коммунистической партии и Советского государства, верного ученика и соратника В. И. Ленина Степана Георгиевича Шаумяна в первой половине 1918 г. во главе Бакинской Коммуны.

После победы Великого Октября большевики Кавказа под руководством С. Г. Шаумяна вели героическую борьбу за победу Советской власти в очень сложной обстановке. Несмотря на это, Бакинская Коммуна высоко держала знамя пролетарского интернационализма в Закавказье, последовательно осуществляла ленинскую революционную тактику. В. И. Ленин полностью доверял Шаумяну, руководителю и вдохновителю Бакинской Коммуны.

Основные причины временного падения Бакинской Коммуны объясняются крайне неблагоприятным соотношением сил, сложившимся в ходе гражданской войны на юге России летом 1918 г. и интервенции империалистических сил в Закавказье.

---

38 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով։ Ճառեր և հոդվածներ, հատ. 3, էջ 171։